ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՈՒՄ և ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ՝ ՈՒՂՂՎԱԾ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՈՐԱԿԻ և ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆԸ» ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԴՐԱՄԱԿԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՄԲ ՆՊԱՍՏՆԵՐ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

# ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ՀՀ ՆԳՆ ԿՀ-2026 ՄԱԱԿ-1

ք. Երևան « » ---------------- 2026թ.

ՀՀ ներքին գործերի նախարարությունը՝ ի դեմս ՀՀ ՆԳՆ գլխավոր քարտուղար Ա. Ֆիդանյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ Պատվիրատու) մի կողմից, և «ՀՀ ՆԳՆ կրթահամալիր» ՊՈԱԿ-ը՝ ի դեմս ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ռեկտոր Մ..Մուրադյանի, որը գործում է ՊՈԱԿ-ի կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ Կատարող) մյուս կողմից, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2025 թվականի դեկտեմբերի 25-ի «Հայաստանի հանրապետության 2026 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N1910 որոշմամբ, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ պայմանագիր) հետևյալի մասին.

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1.Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողն ստանձնում է իրականացնել ՀՀ 2026 թվականի պետական բյուջեի 09.03.02.03 «Մասնագիտական ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողների ատեստավորման համակարգի ներդրում և ատեստավորման գործընթացի շարունակական կազմակերպում՝ ուղղված մանկավարժական աշխատողներիորակի և վարձատրության բարձրացմանը» ծրագրի շրջանակներում «ՀՀ ՆԳՆ կրթահամալիր» ՊՈԱԿ-ի համար հաստատված՝ սոցիալական օգնության դրամական արտահայտությամբ նպաստների ձևով հատկացված գումարների փոխհատուցման պարտավորությունները:

## 2.ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

2.1.Սույն պայմանագրով Կատարողին՝ պարտավորությունները կատարելու համար նախատեսված գինը կազմում է 17160000 (տասնյոթ միլիոն հարյուրվաթսուն հազար) ՀՀ դրամ:

2.2. Պատվիրատուն պարտավորությունները կատարելու դիմաց տրամադրված միջոցները վճարում է Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով՝ սույն պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող թիվ 1 հավելվածին համապատասխան:

## 3.ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ԾԱԽՍԵԼՈՒ ԿԱՐԳԸ

3.1 Կատարողը պետք է ապահովի սույն պայմանագրի 1.1 կետում նախատեսված նպատակների իրականացումը:

3.2 Սույն պայմանագրի 2.1 կետում նշված միջոցները պետք է ծախսվեն սույն պայմանագրի 1.1 կետում նշված նպատակներին համապատասխան

3.3 Կատարողը պետք է հաշվապահական փաստաթղթերը վարի օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան:

## 4.ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

4.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

4.2 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի համաձայնությամբ, որը կնքվում է գրավոր:

4.3 Սույն պայմանագիրը կնքված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ ա տ վ ի ր ա տ ու՝

ՀՀ ՆԳՆ

ք. Երևան, Նալբանդյան 130

ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

ՀՎՀՀ 02882913

Հ/Հ 900011062297

ՀՀ ՆԳՆ գլխավոր քարտուղար՝

---------------------------- Ա.Ֆիդանյան

Կ.Տ

Կ ա տ ա ր ո ղ՝

«ՀՀ ՆԳՆ կրթահամալիր» ՊՈԱԿ

ք. Երևան, Ծովակալ Իսակովի 29

ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

ՀՎՀՀ 01361716

Հ/Հ 900018005018

ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ռեկտոր՝

---------------------------- Մ.Մուրադյան

Կ.Տ

Հավելված 1
«___»______ 2026թ. կնքված
N ՀՀ ՆԳՆ ԿՀ-2026 ՄԱԱԿ-1 պայմանագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

/ հազ.դրամ/

| NN | *Ծառայության անվանումը* | Ֆինանսավորումը 2026թ. ընթացքում՝ ՀՀ 2026թ. պետական բյուջեից /աճողական կարգով/ | | | | | | | | | | | | Ընդամենը տարեկան |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 |
| 1 | Մասնագիտական ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողների ատեստավորման համակարգի ներդրում և ատեստավորման գործընթացի շարունակական կազմակերպում՝ ուղղված մանկավարժական աշխատողներիորակի և վարձատրության բարձրացմանը | 1 430.0 | 2 860.0 | 4 290.0 | 5 720.0 | 7 150.0 | 8 580.0 | 10 010.0 | 11 440.0 | 12 870.0 | 14 300.0 | 15 730.0 | 17 160.0 | 17 160.0 |

Պատվիրատու՝
ՀՀ ՆԳՆ
ք. Երևան, Նալբանդյան 130
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՎՀՀ 02882913
Հ/Հ 900011062297
ՀՀ ՆԳՆ գլխավոր քարտուղար՝

------------------------------ Ա.Ֆիդանյան

Կ.Տ

Կատարող՝
«ՀՀ ՆԳՆ կրթահամալիր » ՊՈԱԿ
ք. Երևան, Ծովակալ Իսակովի 29
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՎՀՀ 01361716
Հ/Հ 900018005018
ՆԳՆ կրթահամալիրի ռեկտոր՝

------------------------------ Ս.Մուրադյան

Կ.Տ